Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

Վահան Մարտիրոսյանի՝ սեպտեմբերի 4-7-ը Կորեայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Վահան Մարտիրոսյան,

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Կորեայի Հանրապետություն, քաղաք Սեուլ, 2017թ. սեպտեմբերի 4-7-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ**

Կորեայի Հանրապետության հողերի, ենթակառոցվածքների և տրանսպորտի նախարարություն,

Կորեայի Հանրապետության արտաքին գործերի նախարարութուն,

Կորեայի Միջազգային ճարտարապետական միություն:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Գլոբալ ենթակառուցվածքների համագործակցության համաժողովի շրջանակներում անցկացվող միջոցառումներին:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

Կորեայի Հանրապետության կառավարության նախաձեռնած ամենամեծ միջազգային միջոցառումը՝ Գլոբալ ենթակառուցվածքների համագործակցության համաժողովը, նպատակաուղղված էր կառավարությունների միջև ենթակառուցվածքների, գործարարության և ֆինանսական ոլորտներում համագործակցության ամրապնդմանն ու ընդլայնմանը:

Համաժողովը անց էր կացվում Սեուլում 5-րդ անգամ, որի հիմնական նպատակն էր ամրապնդել համագործակցությունն օտարերկրյա պետությունների և կորեական ֆինանսական կառույցների, շինարարական և ինժեներական կազմակերպությունների միջև:

Համաժողովին մասնակցող ավելի քան 200 բարձրաստիճան հյուրերի թվում էին 20-ից ավելի նախարարներ և փոխնախարարներ, 50-ից ավելի ոլորտային կազմակերպություններ, ինչպես նաև ենթակառուցվածքային ծրագրերի և ֆինանսական կառույցների ներկայացուցիչներ:

Միջոցառման շրջանակներում կայացած ենթակառուցվածքային պանելի ընթացքում մասնակից պետությունները ներկայացրեցին իրենց երկրներում իրականացվող ծրագրերը՝ ֆինանսական աղբյուրներ և գործընկերներ գտնելու նպատակով:

Վերոնշյալ պանելի ընթացքում հայկական պատվիրակությունը ներկայացրեց Հայաստանի Հանրապետությունում իրականացվող և պլանավորված ենթակառուցվածքային ծրագրերը, մասնավորապես Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիրը, ինչպես նաև ծրագրի այն հատվածները, որոնք նախատեսվում է իրականացնել պետություն-մասնավոր համագործակցության սկզբունքով:

Համաժողովի շրջանակներում մասնակից պատվիրակությունները հնարավորություն ունեցան մասնակցելու Ճարտարապետների միջազգային միության Սեուլի համաշխարհային ճարտարապետների համագումարին և «Գլոբալ խելացի քաղաք շաբաթին»:

Նշյալ համագումարի ընթացքում հնարավորություն ընձեռվեց հանդիպելու հանրային, մասնավոր և գիտական ոլորտի առաջատար մասնագետների հետ, ներկայացվեցին «խելացի քաղաք» թեմային նվիրված մի շարք նախագծեր, ինչպես նաև անդրադարձ կատարվեց աշխարհի ներկա և ապագա խելացի քաղաքներին:

Միջոցառումների արդյունքների հիման վրա՝ Կորեայի Հանրապետության հողերի, ենթակառոցվածքների և տրանսպորտի նախարարություն, Կորեայի Հանրապետության արտաքին գործերի նախարարութուն և Կորեայի Միջազգային ճարտարապետական միություն աջակցությամբ հրատարակվել է 821 էջանոց տպագրություն, որտեղ ընդգրկվել են Գլոբալ ենթակառուցվածքների համագործակցության համաժողովի ընթացքում հնչած բոլոր ելույթներն ու մասնակից երկրների, այդ թվում նաև Հայաստամի Հանրապետության կողմից ներկայացված ծրագրերը:

♦ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Համաժողովի շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը երկկողմ հանդիպում է ունեցել Հարավային Կորեայի հողերի, ենթակառուցվածքների և տրանսպորտի նախարար Քիմ Հյուն-Միի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ճանապարհաշինության, թվային ենթակառուցվածքների ոլորտների զարգացման հեռանկարներին առնչվող երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Նախարար Վահան Մարտիրոսյանը ներկայացրել է այս ոլորտներում Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պետական քաղաքականությունը և ընթացիկ ծրագրերը: Նախարարները մտքեր են փոխանակել նաև պետություն-մասնավոր հատված համագործակցության ձևաչափով հարավկորեական փորձի, տեխնիկական ներուժի և Հայաստանում իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերում հարավկորեական ընկերությունների ներգրավման հարցի շուրջ:

Քննարկվել է Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիրը: Կորեական ընկերությունները հրավիրվել են մասնակցելու Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերին:

Նախարար Վահան Մարտիրոսյանը ներկայացրել է Կորեայի՝ Հայաստանի Հանրապետության միջոցով Եվրասիական և Իրանի Իսլամական Հանրապետության շուկաներ դուրս գալու հնարավորությունները:

Իր հերթին կորեական կողմը հետաքրքրություն է հայտնել Հայաստանում իրականացվող ծրագրերի նկատմամբ՝ ընդգծելով հայկական և կորեական մի շարք ընդհանրություններ:

Նախարար Վահան Մարտիրոսյանը Քիմ Հյուն-Միին հրավիրել է Հայաստան: Վերջինս իր հերթին պատրաստակամություն է հայտնել ամրապնդել և խորացնել երկկողմ համագործակցությունը:

Միջոցառման շրջանակներում ՀՀ պատվիրակությունը հնարավորություն ունեցավ բարձրաստիճան հանդիպումներ ունենալ տրանսպորտային և ենթակառուցվածքային ոլորտները կարգավորող բարձրատիճան պաշտոնյաների հետ, որոնց ընթացքում քննարկվեցին ենթակառուցվածքային խնդիրները, երկկողմ հարաբերությունները ընդլայնելու ուղիները, տրանսպորտային խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված քայլերը, ինչպես նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Այցի շրջանակներում ՀՀ պատվիրակությունը հանդիպել է նաև «Samsung» ընկերությունում աշխատող հայազգի երիտասարդ մասնագետների հետ:

Երիտասարդ մասնագետները նախարարին ներկայացրեցին ընկերությունում իրենց առաջխաղացումների ու հաջողությունների մասին:

Վահան Մարտիրոսյանը իր պատրաստակամությունն է հայտնել աջակցելու երիտասարդներին՝ Հայաստանում ծրագրեր իրականացնելու, ՏՏ կորպորացիաներ նախաձեռնելու, հետազոտական կենտրոններ կամ արտադրություններ հիմնելու, ինչպես նաև Կորեայում ձեռքբերված փորձը Հայաստանում ներդնելու գործում:

Հայ մասնագետներին ներկայացվել են նաև ՏՏ ոլորտում նախարարության լիազորությունների շրջանակը, նախագծերին աջակցության մեխանիզմները:

Հանդիպման մասնակիցները խոսել են հարավկորեական ՏՏ ոլորտի զարգացումների մասին, ներկայացրել տրանսպորտի կառավարման էլեկտրոնային համակարգերի յուրահատկությունները:

Վահան Մարտիրոսյանը հայ մասնագետներին առաջարկել է համագործակցել Հայաստանի Հանրապետության քաղաքներում տրանսպորտային հոսքի մոնիտորինգի համակարգի մշակման նախագծի շրջանակներում: